

## ՀԱԳՄՉ 01.10

Երկրորդ հրատարակություն  
1 հունվարի 2003թ.  
ներառում է փոփոխություններ թիվ 1, 2, 3 և 4

---

### Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՉ) կիրառման ուղեցույց

---

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498  
Կայքէջ՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)

## Զգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմվի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանցից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը՝ վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org>) կամ ՄԱԿԱԾ-ի կայքէջը (<http://www.mineaction.org>):

## Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Տվյալ փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA  
Էլ. փոստ՝ mineaction@un.org  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498

## Բովանդակություն

Բովանդակություն .....	iii
Նախաբան .....	iv
Ներածություն .....	v
Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՁ) կիրառման ուղեցույց .....	1
1. Ծավալ .....	1
2. Փաստաթղթեր .....	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	1
4. Հակաականային գործունեություն .....	2
5. ՀԱԳՄՁ-ների նպատակ .....	2
6. Ուղղորդող սկզբունքներ .....	3
6.1. Ազգային պարտավորություններ .....	3
6.2. Մարդասիրական իմպերատիվներ .....	3
6.3. Կարողությունների զարգացում .....	4
6.4. Միջազգային այլ չափորոշիչներ .....	4
6.5. Միջազգային դաշինքներ .....	4
7. Ստանդարտների միջազգային կազմակերպություն (ISO) .....	5
8. ՀԱԳՄՁ-երի կիրառում .....	5
9. Որակի և ռիսկի կառավարում .....	7
10. Համաձայնեցում .....	7
11. Իրավական պահանջներ .....	8
12. ՀԱԳՄՁ-երի շարունակական վերանայում .....	8
12.1. ՀԱԳՄՁ-երի Վերանայման խորհուրդ .....	8
12.2. ՀԱԳՄՁ-երի Կառավարման խումբ .....	9
12.3. Միջգերատեսչական համակարգման խումբ (Հակաականային գործունեության) (ՄԳՀԽ(ՀԱԳ)) .....	9
13. Պարտավորություններ .....	9
13.1. Միավորված ազգերի կազմակերպություն .....	9
13.2. Տարածաշրջանային կազմակերպություններ .....	9
13.3. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ) .....	10
13.4. Հակաականային գործունեության կենտրոն (ՀԱԿ) .....	10
13.5. Հակաականային գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ .....	10
13.6. Դոնորներ .....	11
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր .....	12
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	13
Հավելված Գ (Տեղեկատվական) Ռիսկի կառավարման և ՀԱԳՄՁ-երի ուղեցույց .....	17
Փոփոխությունների գրանցում .....	21

## Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչներն առաջին անգամ առաջարկվել են 1996թ-ի հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականագերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշներ են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականագերծում» գաղափարին: 1996թ-ի վերջին Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականագերծման գործողությունների միջազգային չափանիշները»: Առաջին հրատարակությունը տպվել է 1997թ-ի մարտին՝ ՄԱԿ-ի Ականագերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից:

Այդ ժամանակվանից ի վեր սկզբնական այդ չափորոշիչների ծավալն ընդլայնվել է՝ հակաականային գործունեության ոլորտի այլ բաղադրիչներ ընդգրկելու և գործառնական ընթացակարգերում, պրակտիկայում և նորմերում փոփոխություններն արտացոլելու նպատակով: Չափորոշիչները լրամշակվեցին և վերանվանվեցին «Հակաականային գործունեության միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՁ)», որոնց առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ-ի հոկտեմբերին:

Միավորված ազգերի կազմակերպությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում հակաականային ծրագրերի արդյունավետ կառավարումն ապահովելու և հորդորելու համար, այդ թվում նաև չափորոշիչների մշակման ու պահպանման համար: Հետևաբար, ՄԱԿ-ի Ականագերծման ծառայությունը (UNMAS, ՄԱԿԱԾ-ը) Միավորված ազգերի կազմակերպության այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՁ-երի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՁ-երը կյանքի են կոչվում Մարդասիրական ականագերծման ժնկի միջազգային կենտրոնի (ՄԱԺՄԿ) աջակցությամբ:

ՀԱԳՄՁ-երի նախապատրաստման, ուսումնասիրման և վերանայման աշխատանքներն իրականացվում են տեխնիկական հանձնաժողովների կողմից՝ միջազգային, կառավարական և ոչ պետական/հասարակական կազմակերպությունների աջակցությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի թարմացված տարբերակը, ինչպես նաև տեխնիկական հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: ՀԱԳՄՁ-երից յուրաքանչյուրն առնվազն երեք տարին մեկ անգամ վերանայվում է՝ հակաականային գործունեության ոլորտում զարգացող նորմերն ու փորձն արտացոլելու, ինչպես նաև միջազգային կանոնակարգերում և պահանջներում փոփոխություններն ընդգրկելու նպատակով:

## Ներածություն

Վերջին տարիներին միջազգային հանրությունը զգալիորեն տեղեկացված է դարձել ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) միջազգային ճգնաժամի ծավալի և խորության մասին և ընդունում է, որ դա համընդհանուր խնդիր է, և պահանջում է համընդհանուր համակարգված մոտեցում/լուծում: Կա նաև այն գաղափարի ճանաչումը, որ Միավորված ազգերի կազմակերպությունը կարևոր դեր է կատարում այդ համընդհանուր մոտեցում/լուծումը ձևավորելու, ինչպես նաև անհրաժեշտ միջազգային աջակցություն և համակարգման մեխանիզմներ ապահովելու գործում:

«Հակաականային գործողություն» տերմինը վերաբերում է բոլոր այն գործողություններին, որոնք միասնաբար նպատակ ունեն նվազեցնելու ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների տարածման սոցիալական, տնտեսական և բնապահպանական ազդեցությունը: Այս գործողությունները բաղկացած են հետևյալ բաղադրիչներից՝ ականների ռիսկի մասին ուսուցում/տեղեկատվություն, ականազերծում<sup>1</sup>, աջակցություն ականների գործածումից տուժածներին, վերգետնյա ականների կիրառումը խարանելու քարոզչություն ու հակահետևանքային ականների համընդհանուր արգելման սատարում և պահուստային ռեզերվների ոչնչացում: Սակայն, հակաականային գործողությունները և դրա բաղկացուցիչ տարրերը չի կարելի ուսումնասիրել միմյանցից առանձին, քանի որ դրանք զգալիորեն համընկնում են մարդասիրական և զարգացմանը միտված լրացուցիչ ծրագրերի հետ, նաև որոշ դեպքերում խաղաղապահ և խաղաղությանը միտված առաքելությունների հետ: Հակաականային գործողությունները կառավարման պլանավորում է պահանջում զլրբալ, ազգային և տեղային մակարդակներում և ընդգրկում է միջազգային, ազգային, առևտրային, ոչ պետական/հասարակական կազմակերպություններ և ռազմական ստորաբաժանումներ, որոնք զանազան պայմաններում են գործում: Այսպիսով, հնարավոր չէ, և ոչ էլ ցանկալի է, մշակել չափանիշների մի ուրույն համակարգ և դրանց միջոցով սահմանել հակաականային գործունեության չափորոշիչները և ուղենիշները: Փոխարենը, անհրաժեշտ է սահմանել չափորոշիչների և ուղենիշների մի համակարգ, որոնք միասին ներդաշնակ կդարձնեն տարբեր ներգրավված կազմակերպությունների և գործակալությունների կողմից իրականացվող գործողությունների և առաջադրանքների մոտեցումը: «Հակաականային գործունեության միջազգային չափորոշիչները» (ՀԱԳՄՉ) ապահովում են միջազգային չափորոշիչների և ուղենիշների այդ համակարգը:

1. Ներառում է տեխնիկական հետազոտում, քարտեզագրում, ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) վնասազերծում, տեղանքի նշում, վնասազերծման վերաբերյալ փաստաթղթեր և նմուշներ և վնասազերծված հողատարածքների հանձնում: (Առավել ամբողջական սահմանման համար տե՛ս ՀԱԳՄՉ 04.10):

## Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՁ) կիրառման ուղեցույց

### 1. Ծավալ

Սույն Ուղեցույցը սահմանում է ՀԱԳՄՁ-ի դերը և հիմք է ծառայում այն ուղենիշ սկզբունքների համար, որոնցով դրանք ճշտորեն և պատշաճ կերպով գործածվում են ազգային իշխանությունների, միջազգային կազմակերպությունների, դոնորական և այն կազմակերպությունների կողմից, որոնք ներգրավված են հակաականային գործողությունների պլանավորման և իրականացման մեջ՝ թե՛ գլխամասային գրասենյակներում, և թե՛ բուն դաշտային/գործնական մակարդակներում:

### 2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթի մի մասը:

### 3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

«Քաղաքականությունը» սահմանում է կազմակերպության մտադրությունն ու նպատակները և հստակորեն ձևակերպում է գործունեության կանոնները, չափորոշիչները և սկզբունքները, որոնք կառավարում են այն ուղին, որով տվյալ կազմակերպությունը մտադրվում է հասնել նշված նպատակներին: Քաղաքականությունը ծավալվում է ի պատասխան ռազմավարական ուղղվածության և գործնական փորձի: Իր հերթին, այն ազդում է պլանների զարգացման ուղու վրա, և ինչպես են միջոցները մոբիլիզացվում և կիրառվում: Քաղաքականությունը հրահանգող բնույթ ունի և համաձայնեցում է ենթադրում կամ առնվազն քաջալերում է այն:

ՀԱԳՄՁ-երը հետևում են ISO-ի չափորոշիչի սահմանմանը. «Չափորոշիչը փաստաթղթով ձևակերպված համաձայնագիր է, որը տեխնիկական մանրամասնություններ կամ այլ ճշգրիտ չափանիշներ է պարունակում, որոնք հետևողականորեն կիրառվում են որպես կանոններ, ուղենիշներ կամ առանձնահատկությունների սահմանումներ՝ ապահովելու նյութերի, ապրանքների, գործընթացների և ծառայությունների համապատասխանությունն իրենց նպատակին»:

Նշում՝ Հակաականային գործողությունների չափորոշիչները նպատակ ունեն բարելավելու հակաականային գործունեության անվտանգությունն ու արդյունավետությունը՝ զարգացնելու նախընտրած գործընթացներն ու փորձը թե՛ գլխամասային գրասենյակի, և թե՛ դաշտային/գործնական մակարդակներում: Արդյունավետ լինելու համար չափորոշիչները պետք է լինեն սահմանման և չափման ենթակա, իրագործելի և վերահսկելի:

«Գործառնական ստանդարտ ընթացակարգերն» (ԳՍԸ-ներ) այն հրահանգներն են, որոնք որոշում են գործառնական խնդրի կամ գործողության իրականացման նախընտրելի կամ ներկայիս սահմանված ձևը: Դրանց նպատակն է կազմակերպության ներսում հիմնադրել կարգապահության, միանմանության, հետևողականության և համընդհանրության ճանաչելի և չափելի մակարդակներ՝ ուղղված գործառնական արդյունավետության և անվտանգության բարելավմանը: ԳՍԸ-ները պետք է արտացոլեն տեղային պահանջներն ու հանգամանքները:

Սույն ուղեցույցում օգտագործված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է Հավելված Բ-ում: Իսկ ՀԱԳՄՁ չափորոշիչների ողջ շարքում օգտագործված տերմինների, սահմանումների և հապավումների ամբողջական ցանկը բերված է ՀԱԳՄՁ 04.10-ում:

#### 4. Հակաականային գործունեություն

Հակաականային գործունեությունը վերաբերում է «... այն գործողություններին, որոնք նպատակ ունեն նվազեցնելու ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) տարածման սոցիալական, տնտեսական և բնապահպանական ազդեցությունը: Հակաականային գործունեությունը չի վերաբերում միայն մանրէազերծմանը: Այն վերաբերում է նաև մարդկանց և հասարակությանը, և ինչպիսի ազդեցություն են նրանք կրում ականներից և ՊՊՄ-ների թունավորումից: Հակաականային գործունեության նպատակն է նվազեցնել ականների և ՊՊՄ-ների ռիսկերն այն մակարդակի, որպեսզի մարդիկ կարողանան անվտանգ ապրել, որպեսզի տնտեսական, սոցիալական և առողջապահական զարգացումը կարողանա տեղի ունենալ առանց ականների կողմից տարածած թունավորման սահմանափակումների, և որպեսզի հնարավոր լինի անդրադառնալ տուժածների կարիքներին»:<sup>2</sup>

Հակաականային գործունեությունը բաղկացած է գործողությունների հինգ լրացուցիչ խմբերից՝

- ա. ականների վտանգի մասին իրազեկում/տեղեկատվություն (ԱՎԻ);
- բ. մարդասիրական ականազերծում, այսինքն՝ ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզագրում, տեղանքի նշում և, անհրաժեշտության դեպքում, վնասազերծում;
- գ. աջակցություն տուժածներին, այդ թվում նաև վերականգնում և վերաինտեգրում;
- դ. ռեզերվների ոչնչացում;
- ե. հակահետևակային ականների (<<Ա) կիրառման դեմ ուղղված քարոզչություն:

Մի շարք այլ լիազոր գործողություններ են հարկավոր՝ աջակցելու հակաականային գործունեության այս հինգ բաղադրիչներին՝ ներառելով գնահատումը և պլանավորումը, ռեսուրսների կենտրոնացումը և բաշխումն ըստ գերակայությունների, տեղեկատվության կառավարումը, մարդկային հմտությունների զարգացման և կառավարման ուսուցում/վերապատասխանումը, որակի կառավարումը և արդյունավետ, պատշաճ ու անվտանգ սարքավորումների կիրառումը:

#### 5. ՀԱԳՄՉ-ների նպատակ

ՀԱԳՄՉ-ները ստեղծվել են բարելավելու հակաականային գործունեության անվտանգությունը, արտադրողականությունն ու արդյունավետությունը և խթանելու հակաականային գործունեության նկատմամբ համընդհանուր և հետևողական մոտեցումը: ՀԱԳՄՉ-երն ուղեցույց են ապահովում, սկզբունքներ հիմնադրում և որոշ դեպքերում միջազգային պահանջներ ու առանձնահատկություններ սահմանում:<sup>3</sup> Դրանք հղումների մի շրջանակ են ապահովում, որը հակաականային գործունեության ծրագրերի ու նախագծերի հովանավորներին ու կառավարիչներին քաջալերում է ձեռք բերել և ցուցադրել արդյունավետության և անվտանգության համաձայնեցված մակարդակները: Դրանք համընդհանուր լեզու/ոճ են ապահովում և տեղեկատվության մշակման ձևեր ու կանոններ են առաջարկում, որոնք կարևոր տեղեկատվության ճշգրիտ և ժամանակին փոխանակումը հնարավոր կդարձնեն:

2. Հակաականային գործունեություն և արդյունավետ համակարգում. Միավորված ազգերի քաղաքականություն, Հակաականային գործունեության աջակցության մասին թիվ A/53/26 որոշում, ընդունվել է 1998թ-ի նոյեմբերի 17-ին:

3. Տվյալ դեպքում «միջազգային պահանջները և առանձնահատկությունները» վերաբերում են այն համաձայնագրերին, միջազգային օրենքներին ու կոնվենցիաներին, միջազգային համաձայնագրերին, ISO միջազգային չափորոշիչներին և այլն, որոնց վերաբերյալ արդեն մասնակից ազգերը համաձայնության են եկել:

ՀԱԳՄՉ-երը ականագերծման գործունեությամբ զբաղվող ազգային մարմիններին (ԱԳԱՄ-ներ) աջակցում են ստեղծել ազգային չափորոշիչներ և ազգային ԳՍԸ-ներ՝ հղումների մի շրջանակ ստեղծելու միջոցով, որը որպես ազգային չափորոշիչ կարող է օգտագործվել կամ հարմարեցվել օգտագործման համար: Որոշակի իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ-ի կամ որոշ այլ ճանաչված միջազգային կազմակերպության համար անհրաժեշտ և պատշաճ կարող է լինել ստանձնել ԱԳԱՄ-ների որոշ կամ բոլոր պարտականությունները և իրագործել դրանց որոշ կամ բոլոր գործառնությունները: Նման դեպքերում ՀԱԳՄՉ-երը դառնում են դե ֆակտո ազգային չափորոշիչ: ՀԱԳՄՉ-երը նաև հիմք են ապահովում դոնոր և իրականացնող կազմակերպությունների միջև իրավական պայմանագրերի մշակման համար:

ՀԱԳՄՉ-երը բուն ԳՍԸ-ները չեն: Դրանք չեն սահմանում այն ձևը, որով հակաականային գործունեության պահանջները պետք է իրականացվեն դաշտում. դա արծարծվում է ազգային և տեղային ԳՍԸ-ներում, կանոններում, հրահանգներում ու գործառնական կանոնագրքերում:

ՀԱԳՄՉ-երը նաև հարմար մի միջոց են ապահովում հակաականային գործունեության համայնքին տեղեկացնելու գոյություն ունեցող միջազգային կանոնակարգերի, կոնվենցիաների, դաշինքների և չափորոշիչների մասին, որոնք ազդում են հակաականային գործունեության վրա, հատկապես այն գործողությունների վրա, որոնք վերաբերում են մարդու հիմնարար իրավունքների, վնասագերծման պահանջների, վտանգների քարտեզագրման և ընդհանուր անվտանգության խնդիրներին:

## 6. Ուղղորդող սկզբունքներ

ՀԱԳՄՉ-երի մշակումն ու կիրառումը ձևավորվել է հինգ ուղղորդող սկզբունքներով. առաջինը՝ ազգային կառավարության իրավունքն է ազգային չափորոշիչները կիրառել ազգային ծրագրերում; երկրորդը՝ չափորոշիչները պետք է պաշտպանեն ամենամեծ ռիսկի ենթարկվածներին; երրորդը՝ շեշտը դրվում է հակաականային գործունեության համապատասխան չափորոշիչների մշակման, պահպանման և կիրառման ազգային կարողության զարգացման վրա; չորրորդը՝ պահպանել համապատասխանությունը այլ միջազգային նորմերի և չափորոշիչների հետ և հինգերորդը՝ համաձայնեցում միջազգային կոնվենցիաների և համաձայնագրերի հետ:

### 6.1. Ազգային պարտավորություններ

Հակաականային գործունեության առաջնահերթ պարտավորությունը դրված է ականներով ծածկված պետության կառավարության վրա: Այս պարտավորությունով սովորաբար լիազորված է լինում ԱԳԱՄ-ը, որին էլ հանձնարարված է հակաականային գործունեության ազգային ծրագրի կանոնակարգումը, կառավարումն ու համակարգումը: ԱԳԱՄ-ը պատասխանատու է ազգային և տեղային պայմանների նախապատրաստման համար, որոնք հնարավոր են դարձնում հակաականային գործունեության արդյունավետ կառավարումը: Վերջին հաշվով այն պատասխանատու է ազգային սահմանների ներսում հակաականային գործունեության ծրագրի բոլոր փուլերի և բոլոր կողմերի համար, այդ թվում նաև հակաականային գործունեության ազգային չափորոշիչների, ԳՍԸ-ների և հրահանգների մշակման համար (տես բաժիններ 7 և 10): Նման դեպքերում ՀԱԳՄՉ-երի ողջ շարքում «ԱԳԱՄ»-ին կատարված հղումները պետք է հասկացվեն որպես կիրառելի Միավորված ազգերի կազմակերպության կամ միջազգային այլ ճանաչված կազմակերպության համար:

### 6.2. Մարդասիրական իմպերատիվներ

Ականները և ՊՊՄ-ներն նախ և առաջ մարդասիրական խնդիր են, և դրանց հարկավոր է անդրադարձնալ մարդասիրական տեսանկյունից: Այդ իմաստով չափորոշիչների կառուցվածքը և դրանց կիրառումը հակաականային գործունեության ազգային ծրագրերում ու տեղային նախագծերում պետք է արտացոլեն չեզոքության, անկողմնակալության և մարդկության հիմնարար մարդասիրական սկզբունքները, որպեսզի հակաականային գործունեության ուշադրության կենտրոնում լինի օգնության տրամադրումն ամենակարիքավորներին:

### 6.3. Կարողությունների զարգացում

Հակաականային գործունեության երկարաժամկետ կարիքներ ունեցող երկրներում տեղային կարողությունների զարգացման խնդրին պետք է անդրադառնալ հակաականային գործունեության ծրագրի ակունքներից ի վեր: Կարողությունների զարգացումն այն գործընթացն է, որի միջոցով անհատները, հաստատություններն ու հասարակությունը (անհատապես և հավաքական ձևով) գործառույթներ են իրագործում, խնդիրներ են լուծում, նպատակներ նախանշում և հասնում դրանց:<sup>4</sup>

Ազգային մակարդակում տեղային կարողությունները հատկորոշվում են հակաականային գործունեության քաղաքականություն և ուղղվածություն մշակելու և հստակորեն ձևակերպելու պետության ունակությամբ ու պատրաստակամությամբ: Դրանք նույնպես վերաբերում են պետության ունակությանը պլանավորելու, համակարգելու, կառավարելու և ապահովելու հակաականային գործունեության մի այնպիսի ծրագիր, որը հաշվետվության ենթակա է, ծախսարդյունավետ է, ի վիճակի է անդրադառնալու ականների և ՊՊՄ-ների թունավորման մարդասիրական և սոցիալ-տնտեսական հետևանքներին ու ապահովելու համապատասխան (այսինքն՝ լիազորող կամ կարգադրող) օրենսդրություն: Նման կարողությունն իր մեջ ներառում է ԱԳԱՄ-ի և այլ գործառնական կազմակերպությունների ստեղծումը խթանելու պատրաստակամությունը, լինեն դրանք զինվորական թե քաղաքացիական բաղադրիչներ, առևտրային ընկերություններ թե ՀԿ-ներ: Այն ներառում է նաև հակաականային գործունեության համար ազգային չափորոշիչների մշակման, պահպանման և կիրառման ունակությունը:

### 6.4. Միջազգային այլ չափորոշիչներ

ՀԱԳՄՉ-երը գրվել են՝ համաձայնեցվելով միջազգային այլ չափորոշիչների հետ և ենթարկվելով միջազգային կանոնակարգերին, կոնվենցիաներին և համաձայնագրերին: Նախադեպերը և նորմերն արդեն գոյություն ունեն միջազգային մակարդակում, հիմնականում Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) միջոցով՝ աշխատավայրում անվտանգության հարցով; իսկ Ստանդարտների միջազգային կազմակերպությունը (ISO) ուղեցույց է տրամադրում թիսկերի կառավարման (ISO ուղեցույց 51) և որակի համակարգերի կիրառման (ISO 9001:2000) վերաբերյալ; և բազմաթիվ միջազգային չափորոշիչների, արձանագրությունների և նորմերի միջոցով, որոնք կանոններ են սահմանում էլեկտրոնային այն տվյալների մշակման, փոխանակման և ցուցադրման վերաբերյալ, որոնք կիրառում ունեն հակաականային գործունեության տեղեկատվության կառավարման մեջ:

### 6.5. Միջազգային դաշինքներ

ՀԱԳՄՉ-ն կառուցված է միջազգային իրավունքի երկու հիմնական համաձայնագրերի վրա, որոնք կապված են ականների և ՊՊՄ-ների հետ:

- ա. Հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրման և տեղափոխման, ինչպես նաև դրանց ոչնչացման կոնվենցիա (Հակահետևակային ականների արգելման կոնվենցիա (ՀՀԱԱԿ) (սովորաբար հայտնի է որպես Օտտավայի կոնվենցիա կամ Ականների արգելման համաձայնագիր);
- բ. Սովորական որոշակի զինամթերքի վերաբերյալ կոնվենցիայի (ՍՈՋ) Փոփոխված Արձանագրություն II-ը՝ հողային ականների, ծուղակ ականների և այլ սարքերի արգելման կամ սահմանափակման վերաբերյալ, և Արձանագրություն V-ը՝ Պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) վերաբերյալ:

4. Վերցված է ՄԱԿ ԶՏ-ի սահմանումից՝ <http://www.magent.undp.org/cdrb/techpap2.htm> կայքէջում:

Հակահետևակային ականների արգելման կոնվենցիային (ՀՀԱԱԿ) և/կամ Փոփոխված Արձանագրություն II-ին անդամակցող երկրները, օրինակ, ունեն որոշակի և առանձին պարտավորություններ ականների վտանգների նշագրման վերաբերյալ: ՀԱԳՄՁ-երի դրույթները, սակայն չեն փոխարինում այն պարտավորությունները, որոնք շարադրված են Հակահետևակային ականների արգելման կոնվենցիայում (ՀՀԱԱԿ) և Փոփոխված Արձանագրություն II-ում:

## 7. Ստանդարտների միջազգային կազմակերպություն (ISO)

ISO-ն ավելի քան 138 երկրների ազգային կազմակերպությունների համաշխարհային դաշնություն է: Դրա աշխատանքի արդյունքն են միջազգային համաձայնագրերը, որոնք տպագրվում են որպես ISO չափորոշիչներ և ուղեցույցներ: ISO-ն ոչ պետական/հասարակական կազմակերպություն է, որի նշակած չափորոշիչները կամավոր են, չնայած որ դրանցից ոմանք (հիմնականում նրանք, որոնք առնչվում են առողջապահության, անվտանգության և բնապահպանական հարցերին) շատ երկրների կողմից ընդունվել են որպես իրենց կանոնակարգող դաշտի մի մաս: ISO-ն առնչվում է մարդկային գործողությունների ողջ ծավալի/շրջանակի հետ, և հակաականային գործունեությանը նպաստող առաջադրանքներից և գործընթացներից շատերն ունեն համապատասխան չափորոշիչ: ISO-ի չափորոշիչների և ուղեցույցների ցանկը ներկայացված է ISO կատալոգում; տես [www.iso.ch/infoe/catinfo/html](http://www.iso.ch/infoe/catinfo/html) կայքը:

ISO-ն ազնվության և չեզոքության միջազգային համբավ ունի և վայելում է գործնական հատուկ հարաբերություններ միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում նաև Միավորված ազգերի կազմակերպության հետ, և տարածաշրջանային կազմակերպությունների հետ, ներառելով Եվրոպական միությունը: ՀԱԳՄՁ-երը մշակվել են՝ ISO-ի չափորոշիչների և ուղեցույցների հետ համատեղելի լինելու նպատակով: ISO-ի ձևաչափի և լեզվի/ոճի որոշորումը զգալի առավելություններ է ապահովում, այդ թվում նաև արտաքին տեսքի փոխկապակցվածությունը, միջազգայնորեն ձանաչված տերմինաբանության օգտագործումը և միջազգային, ազգային ու տեղական կազմակերպությունների կողմից լայն ձանաչումը, որոնք սովոր են չափորոշիչների և ուղեցույցների ISO-ի շարքին: Այն նաև ՀԱԳՄՁ-երին պետք է հնարավորություն ընձեռի՝ ժամանակին ընդունվելու և ձանաչվելու որպես լիարժեք ISO չափորոշիչ:

## 8. ՀԱԳՄՁ-երի կիրառում

Այս չափորոշիչները մշակվել են՝ հակաականային գործունեության ազգային չափորոշիչների մշակման հարցում ազգային իշխանություններին աջակցելու նպատակով: Դրանք չունեն իրավական հիմնավորում բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային իշխանություններն ընդունել են դրանք որպես ազգային չափորոշիչներ, կամ երբ որոշակի ՀԱԳՄՁ-երից մեկը կամ մի քանիսը հատուկ նշված են պայմանագրում կամ մեկ այլ իրավական փաստաթղթում (օրինակ՝ Փոխհամաձայնության հուշագիր (MOU) կամ Համաձայնագիր (LOA)): Անվտանգության և մարդու հիմնարար իրավունքների հարցերի վերաբերյալ բացարձակ համաձայնություն պետք է լինի, որ կարիքը կա որոշորելու համապատասխան չափորոշիչներ և մասնագիտական վարվելակերպի կանոններ: Ստորև բերված է չափորոշիչների պիտանելիության և հակաականային գործունեության ծրագրերում կիրառման վերաբերյալ ուղեցույցը, ինչպես նաև այն ձևը, թե ինչպես են դրանք հարմարացվում հանգամանքներին:

Բաց հակամարտության ժամանակ և պատերազմ հիշեցնող բարդ արտակարգ իրավիճակներում մարդասիրական օգնությունը կարող է խոչընդոտվել, հետաձգվել կամ կանխարգելվել; աջակցություն ապահովող աշխատակիցները կարող են առնչվել անվտանգության զգալի ռիսկերի հետ, և լայնածավալ ու համակարգված միջազգային արձագանքի կարիք կարող է առաջանալ: Հակաականային գործունեության ուշադրությունը կկենտրոնանա ականներից տուժածների և ԱՎԻ վրա, նաև ականների և ՊՊՄ-ների որոշ սահմանափակ ծավալով վնասագերծում կարող է իրականացվել՝ սատարելու օգնության գործակալություններին և աջակցության մարդասիրական աշխատանքներին, սակայն սա սահմանափակ տարածք կգբաղեցնի և նպատակահարմար պետք է լինի: Սովորաբար, հնարավոր չի լինի տեխնիկական հետազոտումներ կատարել, և վնասագերծման ջանքերը հիմնականում ուղղված կլինեն մահվան կամ մարմնական վնասվածքների անմիջական ռիսկի նվազեցմանը՝ նվազագույն կամ առհասարակ որևէ փորձ չկատարելով վնասագերծումից հետո ստուգումներ իրականացնելու համար:

Այս փուլում ԱԳՄՉ-ը սովորաբար դեռ հիմնված չի լինում, հնարավոր է, որպեսզի չլինի որևէ կենտրոնացված իրահանգավորում կամ համակարգում, և կառավարման շատ որոշումներ, այդ թվում նաև աշխատանքի առաջնահերթության խնդիրներ, ընդունվեն հակաականային գործունեության ղեկավարների կողմից, որոնք կաշխատեն տեղական մակարդակում: Նման հանգամանքներում տեղացի ղեկավարները՝ ՀԱԳՄՉ-երը կիրառելիս, սառը դատողություն և բանականություն պետք է ցուցաբերեն: Հնարավորության սահմաններում անվտանգությանը և աշխատանքի հիգիենային (ԱԱՀ) առնչվող չափորոշիչները պետք է խելամտորեն կիրառվեն, և ականների և ՊՊՄ-ների վտանգավոր գոտիների գտնվելու տեղանքների, դժբախտ պատահարների և ականների ու ՊՊՄ-ների տեխնիկական մանրամասների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է փոխանակվի և համակարգված ձևով արձանագրվի՝ կիրառելով ՀԱԳՄՉ-երում առաջարկված սկզբունքներն ու ընթացակարգերը: Նույնիսկ ազգային ծրագրի կամ տվյալների շտեմարանի բացակայության դեպքում վնասագերծման կատարված աշխատանքների պատշաճ արձանագրումը կենսական նշանակություն ունի, եթե հետագայում պետք է խուսափել կրկնակի վնասագերծումից:

Որպես հակամարտության անմիջական արդյունք կայուն և երկարատև խաղաղություն ապահովող պայմաններ դժվար թե առկա լինեն: Քաղաքացիական ենթակառուցվածքները կարող են քանդված լինել, և փախստականների ու ներքին տեղահանված մարդկանց (ՆՏՄ) մեծ զանգվածներ կարող են առկա լինել: Սկզբնական շրջանում կշեշտվի հակաականային գործունեությունը որպես աջակցություն մարդասիրական գործողություններին և խաղաղապահ խնդիրներին, ի տարբերություն տեղային արդյունավետ կարողությունների կառուցմանը: Ականների և ՊՊՄ-ների թունավորման ծավալն ու ազդեցությունն առավել ակնհայտ կդառնան այս փուլում՝ արդյունավետ համակարգման աճող պահանջի և հակաականային գործողության ծրագրերի առաջնահերթությունների հետ միասին՝ հիմնվելով ընդհանուր և հետևողական չափանիշների վրա: Հնարավոր է, ՄԱԿ-ի կողմից հովանավորվող Հակաականային գործունեության կենտրոն (ՀԱԿ) հիմնվի, և շեշտը դրվի տեղեկատվական համակարգերի կառավարման ու GIS-ի ներմուծման վրա, օրինակ՝ Հակաականային գործունեության տեղեկատվական համակարգերի կառավարում (IM SMA) ծրագիրը՝ վտանգների և դրանց անմիջական հետևանքների վերաբերյալ տեղեկատվության համադրման և ցուցադրման նպատակով: Հակաականային գործունեության տեղացի ղեկավարները պետք է շարունակեն իրենց դատողության կիրառումը ՀԱԳՄՉ-երի գործածման վերաբերյալ՝ սկսելով ուշադրությունը վտանգավոր գոտիների քարտեզագրման աշխատանքների կանոնակարգման, ըստ միջազգային չափորոշիչների վնասագերծման իրականացման, եզրափակիչ պաշտոնական զեկուցագրերի ներկայացման և բարձր ռիսկի ենթարկված համայնքների համար ԱՎԻ ծրագրերի պլանավորման վրա:

Արտակարգ իրավիճակում մարդասիրական օգնության փուլի ավարտը սովորաբար բնորոշվում է կառավարության ճանաչված մարմնի ի հայտ գալով, որն արդյունավետ կառավարում է դրսևորում: Կառույցներ կձևավորվեն՝ ապահովելու, որ զարգացման երկարաժամկետ ծրագրերի ֆինանսավորումը խելամտորեն կիրառվի: Շեշտը կդրվի նաև տեղային կարողությունների ստեղծման վրա, ներառելով ԱԳԱՄ-ի հիմնադրումը, ազգային և տարածաշրջանային բոլոր կառույցների հակաականային գործունեության պահանջների համակարգումը: Անհրաժեշտություն կառաջանա նաև ազգային ՀԱԿ ստեղծելու համար, որը կաշխատի որպես ԱԳԱՄ-ի գործնական/աջ ձեռք, իսկ դրա կառավարման գործառույթները կներառեն հակաականային գործունեության ազգային չափորոշիչների և ԳՍԸ-ների մշակումը: Այս ամենը կարող է ՄԱԿ-ի և հակաականային գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների աջակցությունը պահանջել:

Հակաականային գործունեության պատասխանատվությունը կդրվի օգնությունն ընդունող պետության վրա, սակայն միջազգային հանրությունից որոշ ծավալի աջակցություն դեռ կարող է պահանջվել, որը կարող է ներառել աջակցություն՝ համապատասխան սարքավորումների, վերապատրաստման, որակի հաստատագրման և վնասագերծմանը հաջորդող որակի ստուգման ապահովմամբ, ինչպես նաև հավաստագրման սխեմայի և ֆինանսական ստուգման կիրառմամբ, որը կբավարարի միջազգային դոնոր հանրության պահանջները: Հնարավոր է նաև շարունակել խորհրդատվություն ստանալ Միավորված ազգերի կազմակերպությունից, ՀԿ-ներից և ակննագերծող կոմերցիոն կապալառուներից՝ ՀԱԳՄՁ-երի պատշաճ կիրառման և ազգային չափորոշիչների մշակման վերաբերյալ: Այս ամենը կհամարվի կառավարման դասընթացով և տեխնիկական խորհրդատուների օժանդակությամբ:

## 9. Որակի և ռիսկի կառավարում

ՀԱԳՄՁ-երը մշակվել են՝ համաձայնեցվելով ISO Որակի կառավարման համակարգերում (ISO 9001:2000) և ISO Ռիսկի կառավարման համակարգում (ISO Guide 51) պարունակվող առաջարկությունների և գործընթացների հետ: Այս համակարգերի տարրերը զետեղված են ՀԱԳՄՁ-երի գերակշռող մասում, որի միջոցով էլ հենց ՀԱԳՄՁ-երն իրենք դառնում են որակի և ռիսկի կառավարման մի ինտեգրված համակարգ: Այնուամենայնիվ, դեռ գոյություն ունի ևս մեկ պահանջ ԱԳԱՄ-ի և հակաականային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների համար, այն է՝ մշակել ռիսկի և որակի կառավարման իրենց սեփական առանձնահատուկ և անհատական համակարգերը:

ՀԱԳՄՁ-երում ռիսկի կառավարման օգտագործման վերաբերյալ ուղեցույցը բերված է Հավելված Գ-ում:

## 10. Համաձայնեցում

ՀԱԳՄՁ-երում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործվում են՝ արտահայտելու կանոններին համաձայնեցված լինելու նախանշված աստիճանը: Դրանց օգտագործումը համապատասխանում է ISO չափորոշիչներում և ուղեցույցներում օգտագործված ոճին: «Պետք է» բառն օգտագործվում է՝ արտահայտելու այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք կիրառվելու են՝ չափորոշիչի հետ համաձայնեցված լինելու նպատակով: Այն հազվադեպ է օգտագործվում ՀԱԳՄՁ չափորոշիչներում: «Հարկավոր է» բառն օգտագործվում է՝ արտահայտելու նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները: «Կարող է» բառն օգտագործվում է՝ արտահայտելու գործողության հնարավոր/հավանական մեթոդը կամ ընթացքը:

## 11. Իրավական պահանջներ

ՀԱԳՄՁ-երը չունեն որևէ իրավական հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք որևէ ազգային մարմնի կողմից ընդունվել են որպես ազգային չափորոշիչներ, կամ երբ որոշակի ՀԱԳՄՁ-երից մեկը կամ մի քանիսը առանձին նշված են որևէ պայմանագրում կամ որևէ այլ իրավական փաստաթղթում (ինչպիսիք են, օրինակ, Փոխհամաձայնության հուշագիրը կամ Համաձայնագիրը (LOA)): Յուրաքանչյուր պայմանագրի կամ համաձայնագրի շարադրումը պետք է պարզաբանի ՀԱԳՄՁ չափորոշիչների կիրառումն առաջարկված յուրաքանչյուր ծրագրում և պետք է արտացոլի ազգային ու տեղական առանձնահատկությունները, որոնք արդեն քննարկվել են 7-րդ բաժնում; այսինքն՝ տեղի անվտանգության իրավիճակը, կառավարության լիազորությունը, քաղաքական կամքը և առկա միջոցները: Պայմանագրերը պետք է համաձայնեցված լինեն ականներով պատված երկրի օրենքների հետ: Բացի հակաականային գործունեության իրականացմանը վերաբերող առանձնահատուկ օրենսդրությունից սա կարող է նաև ընդհանուր բնույթի խնդիրներին անդրադառնալ, ինչպիսիք են անվտանգությունն ու մասնագիտական առողջությունը, բնապահպանական պահանջները, աշխատանքային հավասար իրավունքներն ու նվազագույն աշխատավարձը: Պայմանագրերի մշակման և ձևակերպման վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՁ 07.20-ում:

## 12. ՀԱԳՄՁ-երի շարունակական վերանայում

ISO-ն յուրաքանչյուր երեքից հինգ տարիների ընթացքում նախաձեռնում է իր բոլոր չափորոշիչների պաշտոնական վերանայումը: Սա արվում է ապահովելու այն հանգամանքը, որ չափորոշիչները դեռ էական են, ճշգրիտ, հասանելի և պատշաճ: ՀԱԳՄՁ-երը ենթակա կլինեն նմանատիպ մի պաշտոնական վերանայման գործընթացի, սակայն, հակաականային գործունեության դինամիկ զարգացման և վտանգավոր բնույթի պատճառով, ՀԱԳՄՁ-երը պաշտոնապես կվերանայվեն երեք տարին մեկ անգամ: Սա չի խոչընդոտում տվյալ ժամանակահատվածում գործառնական անվտանգության կամ արդյունավետության նկատառումներով էական լրամշակումների կատարմանը:

### 12.1. ՀԱԳՄՁ-երի Վերանայման խորհուրդ

Վերանայման պաշտոնական խորհուրդ կկազմավորվի՝ նախաձեռնելու այս առաջադրանքը, և աշխատանքի մեծ մասը կիրականացվի էլեկտրոնային փոստի միջոցով: Վերանայման խորհուրդը հանդիպելու հազվադեպ անհրաժեշտություն կունենա: ՀԱԳՄՁ-երի Վերանայման պաշտոնական խորհուրդը պետք է կազմված լինի հետևյալ անդամներից՝

- a) նախագահ՝ ՄԱԿԱԾ (Միավորված ազգերի կազմակերպության Ականազերծման ծառայություն)
- b) անդամներ՝
  - դոնոր ներկայացուցիչ x 3
  - ականազերծման առևտրային ընկերության ներկայացուցիչ x 2
  - JRC / ITEP ներկայացուցիչ
  - ազգային ծրագրի ներկայացուցչություն x 4
  - ազգային օպերատորի ներկայացուցչություն x 2
  - միջազգային Հ/ականազերծման կազմակերպության ներկայացուցիչ x 3
  - UNDP Հակաականային գործունեության ներկայացուցիչ
  - UNOPS ներկայացուցիչ (պայմանագրերի գծով)
  - UNICEF ներկայացուցիչ (ԱՎԻ գծով)
  - ոլորտի մասնագետներ (ըստ անհրաժեշտության)
- c) քարտուղար՝ ՄԱԺՄԿ (Մարդասիրական ականազերծման ժնկի միջազգային կենտրոն)

## 12.2. ՀԱԳՄՁ-երի Կառավարման խումբ

Կառավարման խումբը ՀԱԳՄՁ-երի Վերանայման խորհրդին գործադիր ուղղություն է ապահովում: Այն հաստատում է Վերանայման խորհրդի անդամների կազմը, Վերանայման խորհրդի իրավասությունների շրջանակը, սատարում է կամ կարգադրում է նոր ՀԱԳՄՁ մշակել: ՀԱԳՄՁ-երի Կառավարման խումբը բաղկացած է հետևյալ անդամներից՝

- a) նախագահ՝ ՄԱԿԱԾ (նախագահող և քարտուղար)
- b) անդամներ՝
  - UNDP
  - UNICEF
  - UNOPS
  - ՄԱԺՄԿ (ի պաշտոնե)

## 12.3. Միջգերատեսչական համակարգման խումբ (Հակաականային գործունեության) (ՄԳՀԽ(ՀԱԳ))

ՄԳՀԽ(ՀԱԳ)-ն պետք է տարեկան հանդիպումներ ունենա բարձրաստիճան մակարդակում (Գլխավոր քարտուղարի տեղակալ և տնօրեններ)՝ քննարկելու ՀԱԳՄՁ-երի Վերանայման խորհրդի ներկայացրած տվյալներն ու առաջարկությունները: Այնուհետև ՄԳՀԽ(ՀԱԳ)-ն կամ 1) կատարի ՀԱԳՄՁ-ի Վերանայման խորհրդի ներկայացրած տվյալներն ու առաջարկությունները; կամ էլ 2) ՀԱԳՄՁ-երի Վերանայման խորհրդին կվերադարձնի այն ՀԱԳՄՁ-երը, որոնց վերաբերյալ խումբը մտահոգություններ ունի՝ լրացուցիչ աշխատանքի և լրամշակման համար:

## 13. Պարտավորություններ

### 13.1. Միավորված ազգերի կազմակերպություն

Միավորված ազգերի կազմակերպությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում ապահովելու և հորդորելու հակաականային ծրագրերի արդյունավետ կառավարումը՝ շարունակաբար բարելավելով ՀԱԳՄՁ-երը՝ արտացոլելու հակաականային գործունեության զարգացող նորմերն ու փորձը և ներմուծելու միջազգային կանոնակարգերում ու պահանջներում տեղի ունեցող փոփոխությունները:

ՄԱԿ-ի Ականագերծման ծառայությունը (ՄԱԿԱԾ) Միավորված ազգերի քարտուղարության կազմում այն գրասենյակն է, որը միջազգային հանրության առջև պատասխանատու է ՀԱԳՄՁ-երի մշակման և պահպանման համար, այդ թվում նաև Ուղեցույցի:

Միավորված ազգերի կազմակերպությունը ՀԱԳՄՁ-երը կիրառում է հակաականային գործունեության իր ծրագրերում, գործողություններում և պայմանագրերում, եթե տեղանքի իրավիճակը չի խոչընդոտում դրանց արդյունավետ կիրառմանը: Նման հանգամանքներում, երբ որևէ մեկ կամ մի քանի ՀԱԳՄՁ-եր նպատակահարմար չեն, ՄԱԿ-ն ապահովում է այլընտրանք, մանրամասնություններ, պահանջներ և ուղեցույց:

### 13.2. Տարածաշրջանային կազմակերպություններ

Աշխարհի որոշակի մասերում տարածաշրջանային կազմակերպություններին իրենց անդամ պետությունների կողմից մանդատ է հանձնվել համակարգելու և աջակցելու հակաականային գործունեության ծրագրերը՝ տվյալ երկրի պետական սահմանների տարածքում (մասնավոր օրինակ է «OAS» հակաականային գործունեության ծրագիրը Կենտրոնական և Հարավային Ամերիկայում):

Նման հանգամանքներում տարածաշրջանային կազմակերպությունը ԱԳԱՄ-ի պարտավորություններից և դերերից շատերը կստանան և դոնոր ռեսուրսների համար կարող է նաև ծառայել որպես «խողովակաշար»: Հակաականային գործունեության տարածաշրջանային կազմակերպությունների պարտավորություններն ու դերերը տարբեր են երկրից երկիր և ենթակա են հատուկ Փոխհամաձայնության հուշագրի կամ այլ նմանատիպ համաձայնագրի կանոնակարգմանը:

### 13.3. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը պատասխանատու է այն պայմանների ապահովման համար, որոնք հնարավոր են դարձնում հակաականային գործունեության ազգային ծրագրերի արդյունավետ կառավարումը: ԱԳԱՄ-ը լիարժեք պատասխանատվություն է կրում իր պետական սահմանների տարածքում հակաականային գործունեության ծրագրերի մշակման և կառավարման համար:

ԱԳԱՄ-ը պատասխանատու է ազգային չափորոշիչների, կանոնակարգերի և հակաականային գործունեության գործողությունների կառավարման ընթացակարգերի ստեղծման և պահպանման համար: Ազգային այս չափորոշիչները, կանոնակարգերն ու ընթացակարգերը պետք է համահունչ լինեն ՀԱԳՄՉ-երին և համապատասխանեն ազգային և միջազգային այլ չափորոշիչներին, կանոնակարգերին ու պահանջներին:

Որոշակի իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ-ի կամ մեկ այլ ճանաչված միջազգային հաստատության համար անհրաժեշտ և նպատակահարմար կարող է լինել ստանձնել ԱԳԱՄ-ի որոշ կամ բոլոր պարտավորությունները և իրականացնել դրա որոշ կամ բոլոր գործառնությունները:

### 13.4. Հակաականային գործունեության կենտրոն (ՀԱԿ)

ՀԱԿ-ը կարող է հիմնվել կամ ԱԳԱՄ-ի կողմից կամ էլ ՄԱԿ-ի կողմից՝ առանձնահատուկ հանգամանքների պայմաններում: Յուրաքանչյուր ՀԱԿ-ի կառուցվածքը կարտացոլի հակաականային գործունեության ազգային պլանը, սակայն ընդհանուր առմամբ դրանք պատասխանատու են հետևյալի համար՝

- ա. պատասխանատվության գոտում հակաականային գործունեության բոլոր գործողությունների համակարգման կամ պլանավորման համար;
- բ. ԱԳԱՄ-ին տեխնիկական խորհրդատվության ապահովում;
- գ. հակաականային գործունեության տվյալների և շտեմարանների պահպանում;
- դ. հակաականային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների հավատարմագրում (եթե հանձնարարված է ԱԳԱՄ-ի կողմից);
- ե. հակաականային գործունեության հետ կապված պատահարների և միջադեպերի հետաքննություն:

### 13.5. Հակաականային գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ

Հակաականային գործունեությամբ զբաղվող ՀԿ-ները, կոմերցիոն ընկերությունները և այլ կազմակերպությունները պարտավոր են սահմանել ԳՍԸ-ներ, հրահանգներ և պարապմունքներ, որոնք կնպաստեն հակաականային գործունեության ծրագրերի արդյունավետ, արտադրողական և անվտանգ իրականացմանը: ԳՍԸ-ների հիմքում պետք է լինեն գործողությունների պետության ազգային չափորոշիչները; (դրանց հիմքում կարող են լինել ՀԱԳՄՉ-երը, եթե ազգային չափորոշիչները դեռ գոյություն չունեն): Այն վայրերում, ուր ԱԳԱՄ-ը դեռ ձևավորման գործընթացում է գտնվում, նման կազմակերպությունները տեղին են՝ ձևավորման գործընթացին օժանդակելու՝ տրամադրելով խորհրդատվություն և աջակցություն, այդ թվում նաև ազգային չափորոշիչների մշակում:

### 13.6. Դոնորներ

Հակաականային գործունեության մեծ մասը ֆինանսավորվում է դոնորների կողմից՝ հիմնականում դա կառավարություններ են, տարածաշրջանային կազմակերպություններ և միջազգային հոգաբարձուական հիմնադրամներ: Դոնորական գործակալությունները կառավարման գործընթացի մի մաս են կազմում և որպես այդպիսին պարտավորություն են կրում ապահովելու, որ իրենց կողմից ֆինանսավորվող ծրագրերն արդյունավետորեն ղեկավարվեն և համաձայնեցված լինեն ազգային և/կամ միջազգային չափորոշիչների հետ: Սա ներառում է ուշադրության կենտրոնացումը պայմանագրային փաստաթղթերի շարադրման նկատմամբ, ինչպես նաև նման պայմանագրերի իրականացման համար ընտրված հակաականային գործունեության կազմակերպությունների կոմպետենտ լինելու և ազգային հավատարմագրման չափանիշները բավարարելու հանգամանքի ապահովումը: Դոնորները կամ դրանց գործակալները մասամբ պատասխանատու են նաև որակի կառավարման չափորոշիչների և ուղեցույցների կիրառման ապահովման համար, այդ թվում նաև վնասագերծված հողատարածքների մոնիթորինգի և վնասագերծմանը հաջորդող ստուգման համար: Պատասխանատվության ու հաշվետվության ենթակա լինելու այս աստիճանը ավելի մեծ է անգամ, երբ ԱԳՄՄ-ը դեռ ձևավորման փուլում է և չի ունեցել փորձ կուտակելու հնարավորություն:

## Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստում կատարված հղումների միջոցով չափորոշիչի տվյալ մասի համար դրույթներ են սահմանում: Ժամանակագրված հղումների մասով տվյալ հրատարակչությունների հետագա լրամշակումները կամ վերանայված տարբերակները չեն կիրառվում: Սակայն, համաձայնագրի կողմերին չափորոշիչի տվյալ մասի հիման վրա հորդորվում է հետաքննել ստորև բերված նորմատիվ փաստաթղթերի ամենաթարմ հրատարակչությունների կիրառման հնարավորությունը: Առանց ժամանակի հիշատակման հղումների մասով հղում կատարված նորմատիվ փաստաթղթի վերջին հրատարակչությունն է կիրառվում: ISO-ի և IEC-ի անդամները ներկայիս վավեր ISO կամ EN չափորոշիչների ռեգիստրներ են վարում:

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականագերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- բ) ՀԱԳՄՉ 07.20 Հակաականային գործունեության պայմանագրերի մշակման և կառավարման ուղեցույց:

Նորմատիվային այլ փաստաթղթեր`

- ա) ISO 9000:2000 Որակի կառավարման համակարգեր` հիմունքներ և բառարան;
- բ) ISO Guide 51 Անվտանգության նկատառումներ` չափորոշիչներում դրանց ներմուծման ուղեցույցները;
- գ) ILO R164 մասնագիտական անվտանգության և առողջության առաջարկություններ, 1981թ.;
- դ) ILO C155 մասնագիտական անվտանգության և առողջության կոնվենցիա, 1981թ.;
- ե) Հակահետևակային ականների արգելման կոնվենցիա (ՀՀԱԱԿ);
- զ) Սովորական որոշակի գինամթերքի վերաբերյալ կոնվենցիա (ՍՈՋ), Փոփոխված Արձանագրություն II և Արձանագրություն V:

Այս փաստաթղթերի ամենաթարմ տարբերակը/հրատարակությունը պետք է օգտագործվի: ՄԱԺՄԿ-ում պահվում են սույն չափորոշիչում օգտագործված բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները: ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղեցույցների և փաստաթղթերի ամենաթարմ տարբերակների/հրատարակությունների ռեգիստրը պահվում է ՄԱԺՄԿ-ում, որը հասանելի է ՀԱԳՄՉ-երի կայքէջում` <http://www.mineactionstandards.org>: ԱԳԱՄ-ը, գործատուները և այլ շահագրգիռ կողմերն ու կազմակերպությունները կրկնօրինակներ պետք է ձեռք բերեն նախքան հակաականային գործունեության ծրագրեր նախաձեռնելը:

## Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

### B.1.

#### Փոփոխված արձանագրություն II (ՓԱԿ II)

Վնասակար կամ ընդհանուր ազդեցություններ ունեցող սովորական որոշակի զինամթերքի (ՍՈՋ) օգտագործման վերաբերյալ արգելման կամ սահմանափակումների Կոնվենցիայի փոփոխված արձանագրություն II (ՓԱԿ II):

Նշում՝ Այն արգելում է բոլոր չհայտնաբերվող հակահետևակային ականների օգտագործումը և կանոնակարգում է ականների, ծուղակ ականների և այլ սարքերի ավելի լայն դասակարգերի օգտագործումը: ՀԱԳՄՉ փաստաթղթերի առնչության տեսանկյունից ՀՀԱԱԿ-ի հոդված 5-ը սահմանում է ականապատված գոտիների նշագրման և մոնիթորինգի պահանջները: Հոդված 9-ը դրույթներ է սահմանում ականադաշտերի և անապատված գոտիների վերաբերյալ տեղեկությունների արձանագրման և դրանց օգտագործման համար: Իսկ Տեխնիկական հավելվածն ի թիվս այլ կետերի ուղեմիջ է ապահովում տեղեկությունների արձանագրման և ականադաշտերի ու ականապատված գոտիների համար միջազգային նշանների վերաբերյալ:

### B.2.

#### Հակահետևակային ականների արգելման կոնվենցիա (ՀՀԱԱԿ)

Օտտավայի կոնվենցիա

Ականների արգելման դաշնագիր (ԲԱԴ)

Նշում՝ Ապահովում է Հակահետևակային ականների (ՀՀԱ) օգտագործման, կուտակման, արտադրման և տեղափոխման, ինչպես նաև դրանց ոչնչացման ամբողջական արգելքը: ՀԱԳՄՉ փաստաթղթերի առնչության տեսանկյունից ՀՀԱԱԿ-ի հոդված 5-ը սահմանում է ականապատված գոտիներում ՀՀԱ-ների ոչնչացման պահանջները: Հոդված 6-ը մանրամասնում է Դաշնագրում պահանջվող թափանցիկության միջոցառումները, այդ թվում նաև տեղեկատվություն ականապատված կամ կասկածելի ականապատված գոտիների տեղանքի վերաբերյալ, ինչպես նաև տեղացի բնակչությանը նախազգուշացնելու համար նախաձեռնված միջոցառումները:

### B.3.

#### Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՋ)

**Պայթուցիկ զինամթերք**, որը չեն օգտագործվել զինված հակամարտության ընթացքում, որոնք լքվել կամ զցվել են զինված հակամարտության մասնակցի կողմից և որոնք այլևս չեն գտնվում դրանք լքած կամ զցած կողմի վերահսկողության տակ: Լքված պայթուցիկ հրանոթները կարող են կամ չեն կարող լինել լիցքավորված, համակցված, հրահանները քաշված կամ այլապես նախապատրաստված օգտագործմանը: (ՍՈՋ Արձանագիր)

### B.4.

#### ՍՈՋ (Սովորական որոշակի զինամթերքի վերաբերյալ 1980թ-ի կոնվենցիա)

(2007)

Սովորական որոշակի զինամթերքի վերաբերյալ 1980թ-ի կոնվենցիա)

Նշում՝ Վնասակար կամ ընդհանուր ազդեցությունների ունեցող սովորական որոշակի զենքերի (ՍՈՋ) օգտագործման վերաբերյալ Արգելքների և սահմանափակումների 1980թ-ի կոնվենցիա, որը փոփոխության է ենթարկվել 2001թ-ի դեկտեմբերի 21-ին: Այն ունի հինգ «արձանագրություն»: Դրանցից միայն երկուսն են վերաբերում հակասականային գործունեությանը: **Փոփոխված Արձանագրություն II-ը** վերաբերում է հողային ականներին, ծուղակ ականներին և այլ սարքերին, իսկ **Արձանագրություն V-ը** վերաբերում է Պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) խնդրին:

### B.5.

## ականագերծում

մարդասիրական ականագերծում

Գործողություններ, որոնք նպաստում են ականների և ՊՊՄ-ների մաքրմանը, ներառելով տեխնիկական հետազոտում, քարտեզագրում, վնասագերծում, տեղանքի նշում, վնասագերծման վերաբերյալ փաստաթղթեր և վնասագերծված հողատարածքների հանձնում: Ականագերծումը կարող է տարբեր տիպի կազմակերպությունների կողմից իրականացվել, օրինակ ՀԿ-ներ, առևտրային ընկերություններ, հակաականային գործունեության ազգային թիմեր կամ զինվորական ստորաբաժանումներ: Ականագերծումը կարող է լինել արտակարգ իրավիճակային կամ զարգացման նկատառումներով:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականների և ՊՊՄ-ների վնասագերծումը համարվում է ականագերծման գործընթացի ընդամենը մեկ մաս:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականագերծումը համարվում է հակաականային գործունեության մի բաղադրիչ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում «ականագերծում» և «մարդասիրական ականագերծում» տերմինները համարժեք են:

## B.6.

### Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթած զինամթերք (ՉՁ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՁ), (ՍՈՋ Արձանագրություն V):

## B.7.

### վնաս

Մարդկային առողջությանը ֆիզիկական վնասվածք կամ վնաս, կամ վնաս սեփականությանը կամ շրջակա միջավայրին [ISO Guide 51: 1999(E)]:

## B.8.

### վնասաբեր միջոցառում

Միջադեպ, որի ժամանակ վտանգավոր իրավիճակը հանգեցնում է վնասի [ISO Guide 51:1999(E)]:

## B.9.

### վտանգ

Վնասի հավանական աղբյուր [ISO Guide 51:1999(E)]:

## B.10.

### վտանգավոր իրավիճակ

Հանգամանք, որում մարդիկ, սեփականությունը կամ շրջակա միջավայրը ենթարկվում են մեկ կամ ավելի վտանգների [ISO Guide 51:1999(E)]:

## B.11.

### նախանշված օգտագործում (հողի)

Հողի օգտագործումն ականագերծման գործողություններից հետո:

Նշում՝ Նախանշված օգտագործում. ապրանքի, գործընթացի կամ ծառայության օգտագործում մատակարարի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն [ISO Guide 51:1999(E)]:

Նշում՝ Հողի նախանշված օգտագործումը պետք է ներառված լինի վնասագերծման առաջադրանքի նկարագրության և վնասագերծման առաջադրանքի հանձնման-ընդունման փաստաթղթերում:

## B.12.

### ական

Զինամթերք, որը նախագծվել է՝ տեղադրվելու հողի կամ մեկ այլ մակերեսի տակ, վրա կամ մոտ, և պայթելու մարդու կամ մեքենայի ներկայության, մոտենալու կամ շփման արդյունքում [ԲԱԴ]:

**B.13.**

**ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ)**

Գործողություններ, որոնք նպաստում են ականներից/ՊՊՄ-ներից վնասվածք ստանալու ռիսկի նվազեցմանը՝ բարձրացնելով իրազեկումը և խթանելով վարվելակերպի դրսևորում, այդ թվում նաև հանրային տեղեկատվության տարածում, կրթություն և ուսուցում և հակաականային գործունեության համայնքային հետադարձ կապ:

**B.14.**

**Հակաականային գործունեության ազգային մարմին (ԱԳԱՄ)**

Ականներով պատված յուրաքանչյուր երկրում կառավարության վարչություններ, կազմակերպություններ կամ հաստատություններ, որոնց պարտավորությունն է հակաականային գործունեության կանոնակարգումը, կառավարումն ու համակարգումը:

Նշում՝ Դեպքերի մեծամասնությունում ազգային ՀԱԿ-ը կամ դրա համարժեքը կգործի որպես ԱԳԱՄ կամ դրա անունից:

Նշում՝ Որոշակի իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ-ի կամ մեկ այլ ճանաչված միջազգային հաստատության համար անհրաժեշտ և նպատակահարմար կարող է լինել ստանձնել ԱԳԱՄ-ի որոշ կամ բոլոր պարտավորությունները և իրականացնել դրա որոշ կամ բոլոր գործառույթները:

**B.15.**

**Խելամտորեն կանխատեսելի սխալ օգտագործում**

Ապրանքի, գործընթացի կամ ծառայության օգտագործումն այնպիսի ձևով, որը չի նախատեսվել մատակարարի կողմից, բայց որը հնարավոր է տեղի ունենա՝ հեշտությամբ կանխատեսելի մարդկային վարվելակերպի պատճառով [ISO Guide 51:1999(E)]:

**B.16.**

**մնացորդային ռիսկ**

*Մարդասիրական ականագերծման համատեքստում այս տերմինը վերաբերում է..... այն ռիսկին, որը դեռ մնում է բոլոր խելամիտ ջանքերը գործադրելուց հետո, որպեսզի հեռացվեն և/կամ ոչնչացվեն բոլոր ականների ու ՊՊՄ-ների վտանգները որոշակի տարածքում որոշակի խորության վրա [փոփոխություն ISO Guide 51:1999]:*

**B.17.**

**ռիսկ**

Վնասի տեղի ունենալու հավանականության և վնասի լրջության համակցություն [ISO Guide 51:1999(E)]:

**B.18.**

**ռիսկի վերլուծություն**

Առկա տեղեկատվության համակարգված օգտագործում՝ վտանգները հայտնաբերելու և ռիսկը գնահատելու նպատակով [ISO Guide 51:1999(E)]:

**B.19.**

**ռիսկի գնահատում**

Ընդհանուր գործընթաց, որը բաղկացած է ռիսկի վերլուծությունից և ռիսկի բնորոշումից [ISO Guide 51:1999(E)]:

**B.20.**

**ռիսկի բնորոշում**

Գործընթաց, որի հիմքում ռիսկի վերլուծություն է առ այն, արդյոք հասանելի է դարձել հանդուրժելի/տանելի ռիսկը [ISO Guide 51:1999(E)]:

**B.21.**

**ռիսկի նվազեցում**

Գործողություններ, որոնք կատարվում են նվազեցնելու կոնկրետ ռիսկի հավանականությունը կամ դրա հետ կապված բացասական հետևանքները կամ երկուսը միասին:

**B.22.**

**ապահովություն**

Ռիսկի նվազեցում հանդուրժելի/տանելի աստիճանի [ISO Guide 51:1999(E)]:

**B.23.**

**տանելի ռիսկ**

Այն ռիսկը, որն ընդունելի է տվյալ համատեքստում՝ հիմնվելով հասարակության ներկայիս արժեքների վրա [ISO Guide 51:1999 (E)]:

**B.24.**

**չափորոշիչ**

Չափորոշիչը փաստագրված համաձայնագիր է, որը պարունակում է տեխնիկական մանրամասնություններ կամ այլ ճշգրիտ չափանիշներ, որոնք համաձայնեցված կարգով օգտագործվելու են որպես կանոններ, ուղեցույցներ կամ առանձնահատկությունների սահմանումներ՝ ապահովելու, որ նյութերը, ապրանքները, գործընթացներն ու ծառայությունները համապատասխանում են իրենց նպատակին:

Նշում՝ Հակաականային գործունեության չափորոշիչները նպատակ ունեն բարելավելու հակաականային գործունեության անվտանգությունն ու արդյունավետությունը՝ խթանելով նախընտրած ընթացակարգերը և փորձը թե զխամասային գրասենյակում, և թե դաշտային/գործնական աշխատանքներում: Արդյունավետ լինելու համար չափորոշիչները պետք է լինեն բնորոշման և չափման ենթակա, հասանելի և վերահսկելի:

**B.25.**

**Չպայթած զինամթերք (ՉԶ)**

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հագեցվել է պայթուցիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել է օգտագործման համար կամ օգտագործվել է: Այն կարող է լինել հրանետված, ցած զցած, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

**B.26.**

**աջակցություն տուժածներին**

**աջակցություն փրկվածներին**

Վերաբերում է օգնության, աջակցության, հոգատարության և օժանդակության այն ողջ ծավալին, որը տրամադրվում է տուժածներին (այդ թվում նաև փրկվածներին)՝ նպատակ ունենալով նվազեցնելու անմիջական և երկարատև բժշկական ու հոգեբանական հետևանքները ստացած տրավմաներից հետո:

## Հավելված Գ (Տեղեկատվական) Ռիսկի կառավարման և ՀԱԳՄՁ-երի ուղեցույց

### C.1. Ծավալ

Սույն Հավելվածն ուղեցույց է տրամադրում ռիսկի կառավարման և հակաականային գործունեության մեջ դրա կիրառման վերաբերյալ:

### C.2. Նախադրյալներ

Ինչպես ՀԱԳՄՁ-ում է սահմանված, մարդասիրական ականազերծման թիրախն է ականների և ՊՊՄ-ների բոլոր վտանգների հայտնաբերումը և դրանց վերացումը որոշակի տարածքում որոշակի խորության վրա: Նպատակ է դրվում խթանելու մի այնպիսի մշակույթ, երբ ականազերծող համայնքը ջանում է հասնել այս թիրախին՝ մշակելով և կիրառելով կառավարման համապատասխան ընթացակարգեր, ստեղծելով և շարունակաբար բարելավելով ղեկավարների և ականազերծողների հմտությունները, և ձեռք բերելով անվտանգ, արդյունավետ և բարձր արտադրողականության սարքավորումներ:

Մշակվել և ընդունվել է ականների վնասազերծման պահանջների ՀԱԳՄՁ-ը (09.10): ՀԱԳՄՁ-ը ընդգրկում է մի այնպիսի նոր մոտեցում, որը հաշվի է առնում ռիսկի կառավարման և որակի կառավարման լավագույն փորձը: Համապատասխան ռեսուրսների որոշման ժամանակ, երբ դրանք հատկացվելու են՝ գնահատելու վնասազերծման որոշակի գործողության ընդհանուր որակը, պատշաճ նկատառում պետք է տրվի ականներով պատված հողատարածքների նախատեսված օգտագործմանը և այն պոտենցիալ ռիսկին, որին ենթարկվում է հողօգտագործող՝ աննկատ մնացած ականի պատճառով:

Մշակվել և ընդունվել է նաև վնասազերծված հողատարածքների ստուգման վերաբերյալ վերանայված ՀԱԳՄՁ-ը (09.20): Այն ուղեցույց է ապահովում նմուշների միջոցով վնասազերծված հողատարածքների ստուգման վերաբերյալ: Այն սահմանում է տերմիններ, առաջարկում կառավարման համակարգ և ընթացակարգեր՝ հիմնվելով ISO 2859-ի վրա, և ուղեցույց է տրամադրում այս ընթացակարգերի իրականացման վերաբերյալ:

### C.3. Ապահովության հայեցակարգ

**Ապահովությունը** ձեռք է բերվում՝ ռիսկը հանդուրժելի/տանելի աստիճանի նվազեցնելով, որը սույն ՀԱԳՄՁ-ում սահմանվում է որպես **տանելի ռիսկ**: Չի կարող գոյություն ունենալ բացարձակ ապահովություն; որոշ չափի ռիսկն առկա է, և դա **մնացորդային ռիսկն** է [ISO Guide 51:1999(E)]:

Այդ պատճառով էլ մարդասիրական ականազերծման համատեքստում վնասազերծված հողատարածքները երբեք չեն կարող ապահով լինել, դրանք կարող են միայն հարաբերական անվտանգություն ունենալ: Սա կյանքի անխուսափելի իրականությունն է, որը չի նշանակում, որ չեն բավարարվում Հակահետևակային ականների արգելման կոնվենցիայի (<<ՀԱԿ) կողմից դրված պահանջները, որոնք են՝ վնասազերծել բոլոր ականներն ու ՊՊՄ-ները: Այն պարզապես նշանակում է, որ մենք չենք կարող 100% վստահությամբ հաստատել, որ այդ պահանջները կատարված են: ՀԱԳՄՁ-երում առաջարկված ռիսկի և որակի կառավարման համակարգերը նպատակ ունեն այնքանով մոտ լինել այդ 100% վստահության կատարյալ մակարդակին, որքանով իրատեսորեն հնարավոր է՝ այդ ընթացքում հնարավորություն ընձեռելով հակաականային գործունեության ազգային կառույցներին սահմանելու, թե որն է այն **տանելի ռիսկը**, որը նրանք պատրաստ կլինեն ընդունելու իրենց առանձնահատուկ միջավայրում:

#### **C.4. Ռիսկի կառավարում**

##### **C.4.1. Տանելի ռիսկի սահմանում**


**Տանելի ռիսկը** որոշվում է՝ փնտրելով բացարձակ **ապահովությունը** և հակադրելով այն հետևյալ գործոններին՝

- ա. առկա միջոցները;
- բ. վնասագերծված հողատարածքների օգտագործողի օգուտը;
- գ. հասարակության սովորույթները;
- դ. ծախսերի խնայողությունը;
- ե. վտանգներն ու ռիսկերը:

Այստեղից հետևում է, որ կարիք կա շարունակաբար վերանայելու այն հանդուրժելի/տանելի ռիսկը, որի հիման վրա կառուցվել է որոշակի միջավայրում ականազերծման գործողությունների հայեցակարգը:

##### **C.4.2. Ռիսկի գնահատում և նվազեցում**

Տանելի ռիսկը պարզվում է ռիսկի գնահատման (ռիսկի վերլուծություն և ռիսկի բնորոշում) և ռիսկի նվազեցման կրկնվող գործընթացների շնորհիվ:



#### Գ.4.3. Պարզել տանելի ռիսկը

Հետևյալ ընթացակարգերը պետք է օգտագործվեն ՀԱԳՄՁ-երի հետ միասին, որպեսզի ռիսկերը նվազեցվեն հանդուրժելի/տանելի աստիճանի՝

ա. գտնել ընթացակարգի կամ վնասագերծված հողատարածքի հավանական օգտագործողների խումբը;

բ. սահմանել նախատեսված օգտագործումը և գնահատել ընթացակարգի կամ վնասագերծված հողատարածքի խելամտորեն կանխատեսելի սխալ օգտագործումը;

գ. հայտնաբերել յուրաքանչյուր վտանգ (այդ թվում նաև ցանկացած վտանգավոր իրավիճակ և վնասաբեր միջոցառում), որը ծագում է գործընթացի բոլոր փուլերում;

դ. գնահատել և բնորոշել այն ռիսկը, որին ենթարկվում է յուրաքանչյուր սահմանված օգտագործողը կամ խումբը;

ե. դատել, արդյոք այդ **ռիսկը տանելի** է (օրինակ՝ համեմատելով օգտագործողի այլ ռիսկերի հետ և ինչը որ ընդունելի է հասարակության համար);

զ. եթե **ռիսկը տանելի** չէ, ապա նվազեցնել ռիսկն այնքան, մինչև այն դառնա հանդուրժելի/տանելի:

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրականացնելիս՝ գերակայությունների կարգը պետք է լինի հետևյալը.

ա. ըստ էության անվտանգ կազմակերպում;

բ. պաշտպանիչ սարքավորումներ;

գ. տեղեկատվություն օգտագործողներին:

#### **Գ.5. Եզրահանգում**

Շեշտը պետք է դնել այն փաստի վրա, որ որակը հոմանիշ **Չէ** անվտանգությանը, և հետևաբար որակի կառավարման և ռիսկի կառավարման համապատասխան դերերը չպետք է շփոթել: Մարդասիրական ականագերծման հաջողությունը կախված է ինչպես որակի կառավարման, այնպես էլ ռիսկի կառավարման սկզբունքների և ընթացակարգերի ինտեգրված կիրառումից:

Մարդասիրական ականագերծման ծրագրերի շահառուները պետք է համոզված լինեն, որ վնասագերծված հողատարածքներն անվտանգ են իրենց օգտագործման համար: Սա պահանջում է, որ կառավարման համակարգերը և վնասագերծման ընթացակարգերը պատշաճ լինեն, արդյունավետ, բարձր արտադրողականությամբ և անվտանգ: Ռիսկի և որակի կառավարման լավագույն փորձի կիրառումը կնպաստի մարդասիրական ականագերծման գործողությունների նշանակալից բարելավմանը: Իսկ այս օգուտները շոշափելի կլինեն համայնքների և անհատների կողմից, ովքեր տուժել են ականներից և ՊՊՄ-ներից:

## Փոփոխությունների գրանցում

### ՀԱԳՄՁ-երում կատարվող փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՁ չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն դա չի խոչընդոտում տվյալ եռամյա ժամանակահատվածում գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներով լրամշակումների կատարմանը:

Երբ փոփոխություններ են կատարվում տվյալ ՀԱԳՄՁ-ում, դրանց հերթական համար է հատկացվում, իսկ փոփոխության ամսաթիվը և ընդհանուր նկարագրությունը ցուցադրվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունը կցուցադրվի նաև ՀԱԳՄՁ-ի առաջին էջում՝ հրատարակման ամսաթվի տողում ներառելով հետևյալը. *»ընդգրկում է փոփոխություն թիվ 1-ը և այլն»:*

Յուրաքանչյուր ՀԱԳՄՁ-ի պաշտոնական վերանայումն ավարտվելուն պես կարող են լույս տեսնել նոր հրատարակություններ: Նոր հրատարակության ամսաթիվն նախորդող փոփոխություններն ընդգրկված կլինեն նոր հրատարակությունում, իսկ փոփոխությունների աղյուսակը կդատարկվի: Փոփոխությունների գրանցումը նորից կվերսկսվի, մինչև տեղի կունենա նոր վերանայումը:

ՀԱԳՄՁ-երի ամենաթարմ փոփոխված տարբերակը կլինի ՀԱԳՄՁ-երի կայքում տեղադրված նյութը՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org):

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1 դեկտեմբերի 2004թ.	1. Ձևաչափի փոփոխություն: 2. Տեքստի խմբագրական չնչին փոփոխություն: 3. Տերմինների, սահմանումների և հապավումների փոփոխություն ըստ անհրաժեշտության՝ ապահովելու տվյալ ՀԱԳՄՁ-ի համաձայնեցումը ՀԱԳՄՁ 04.10-ին:
2	23 հուլիսի 2005թ.	1. Հավելված Ա, «Ականների վտանգի մասին իրազեկում» սահմանումի փոփոխություն՝ համաձայնեցնելու ՀԱԳՄՁ 04.10-ին:
3	1 օգոստոսի 2006թ.	1. Չնչին փոփոխություններ/լրացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. Բաժին 4, տեղափոխել երրորդ պարբերությունը վերև, քանի որ առաջինում կան տեքստի չնչին փոփոխություններ: 3. «Ականներ և <b>ՊՊՄ-ներ</b> » տերմինի ներմուծում: 4. «Սպառնալիք» տերմինի ջնջում:
4	22 ապրիլի 2008թ.	1. Բաժին 2-ի ներմուծում, հաջորդ բաժինների համարների վերադասակարգում, «Հավելված Ա, նորմատիվ հղումներ»-ի ներմուծում և մյուս հավելվածների վերադասակարգում: 2. Չնչին փոփոխություններ 6.5-a բաժնում և 6.5-b բաժնում, «ՍՈՋ Արձանագրություն V» ներմուծում: 3. Հավելված Բ-ում «ԼՊՋ» և «ՍՈՋ» սահմանումների լրացում: